


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ  
**Ե. ՓՈՐՈՍՅԱՆ**  
 ՆԱՄԱԿ ԿԱՐՈՒ ԵՒ Ե ԳՈՒՌԻՒՆ  
 ՊԵՏԵ Ե ՈՐԴՆԵՒ ԱՌ  
 ՏՃՈՐԻՑ. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
 ԳԱՀԻՐԷ (Chap. de la Presse)

**E. TOROSSIAN**  
 Direct. propr. du journal arménien  
**ARCHALOUICE**  
 LE CAIRE (Égypte)  
 Poste-restante



**Լ Ր Ա Գ Ի Ր**  
**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՆԱՄԱԿ	
Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒ ԿԱՆԹԻԿ Ե  
 ԵՒ ՊՐԵՍԱՐԻ ՅԱՒԵՐԸ  
 ԽՈՐԱԳՐՈՒՔԻԱՆՍ ՎՐԱՅ:

ԽՈՐԱԳՐՈՒՔԻԱՆՍ ՈՒՂՈՒԱԾ  
 ԳՐՈՒՔԻԱՆԻՑ ԵՅ ՀՆԵՑ ԵՐՈՒՔԸ:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
 Կանխիկ վճարելի են

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Գահիրէի հայոց Որբասիրաց ընկերու-  
 թիւնը յառաջիկայ շաբաթ 1900 Ապրիլ  
 7ի գիշերը, Խտիվական Օրէրա Թատրոնին  
 մէջ մեծ պատրաստութեամբ Օթէլլօի  
 ներկայացումը պիտի տայ, ի նպաստ Որբա-  
 սիրաց ընկերութեան մայրաղուրկ մանկիկ-  
 ներուն և Կիպրոսի Կրթարան-Որբանոցի  
 բարենպաստակ և օգտակար հաստատու-  
 թեան:

Մարդասիրութեան և հայրենասիրու-  
 թեան գործը կրող այսպիսի ազգօգուտ  
 ձեռնարկ մը, վստահ ենք թէ՛ պիտի ար-  
 ժանանայ ոչ միայն հայ ազնիւ հասար-  
 կութեան քաջաբնանացն, քաջ և ամեն ազ-  
 գի և դասակարգի պատկանող անձնաւո-  
 Րութեանց, որոց սրտին մէջ բարեգործու-  
 թեան հուրը կը վառուի:

Անոնք որ պիտի փութան նիւթապէս  
 աշակցիլ այսպիսի բարենպաստակ ձեռնարկի  
 մը, համոզուած պէտք է ըլլան թէ՛ բարե-  
 գործելու հաճոյքին պիտի միանայ, Որբասի-  
 րաց ընկերութեան Պատ. վարչութեան փոյթ-  
 եօանդն ջանիք և Տիար Թ. Փասուլեանի  
 կազմակերպած խմբին յաջողութեան շնոր-  
 հիւ, զբօսալից երեկոյթ մը անցնելու հա-  
 ւանականութիւնը:

**ԱՐՄԱՏԱՑԱԾ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐ**

Ո՛րչափ դարերը, տարիները և սերունդ-  
 ները իրարու յաջորդեն, ո՛րչափ մենք մեծ  
 յոյս տածենք թէ՛ մեր վարք ու բարքերը  
 օրըստօրէ դէպի լաւ բարեփոխութիւններ  
 կրնալ շաղիլ մէջ կը մտնեն, ո՛րչափ կեանքի  
 ընթացքին մէջ մեր քայլերուն հանդիպած  
 անախորժ միջադէպերէն օգտակար դասեր  
 առնելու՝ ստիպուած ըլլանք, դարձեալ մեր  
 ազգային յատկանիշերուն և բարքերուն մէջ  
 — ըլլայ նոյն իսկ զարգացած կեդրոններու  
 մէջ — կը նշմարուի հակում մը դէպի ետ,  
 որոց նմանները մեր տեսութեան առջև ունեն  
 նալու համար, հարկ կըլլայ մէկ երկու և  
 աւելի դարեր յետագարձ ակնարկներ ուղ-  
 զել և պատմութեանց էջերը պրպտել:

Ազգի մը հիմն է ընտանիքը. և երբ  
 ընտանիք մը լաւ կազմակերպուած և նոյն-  
 չափ ալ լաւագոյն տարրերէ բաղկացած

ըլլայ, հոն պէտք եղած քանակութեամբ  
 համերաշխութիւնը և խաղաղութիւնը կը  
 տիրէ, և որոյ արդիւնքը կըլլայ յառաջդի-  
 մութիւն. իսկ երբ ընդհակառակը ազգը  
 կազմող ընտանիքներու մէջ կ'սկսի այս  
 յատկութիւնները, և խախտու հիմերու  
 դրուած ըլլան անոնց շէնքերը, ընտանեկան  
 ապագայ բարօրութիւնը կը քայքայի, որուն  
 կը յաջորդէ հետզհետէ ազգին ալ ապա-  
 կանութեանց մէջ թաղուիլը և քայքայումը:

Ուրեմն պէտք է ամենէն շատ մեր  
 ուշը գրաւէ թէ՛ մեր ազգին մէջ նոր ըն-  
 տանիքներ կազմելու ամենափափուկ գործը  
 ի՞նչ եղանակաւ և ի՞նչ ձևերով տեղի կու-  
 նենայ և թէ՛ մեր նորահաս երիտասարդները  
 ի՞նչ յուսախաբութեանց հանդէպ կը գըտ-  
 նուին յաճախ:

Գաւառներուն մէջ, ուր նուազ չափով  
 հետզհետէ մուտ կը գտնէ զարգացումը,  
 մեր երիտասարդներն ու օրիորդներ՝ շատ  
 աննախանձելի վիճակ մը ունեցած են և  
 ունին ամուսնութիւններ կնքելու տեսակէ-  
 տով. և անոնք որ ականատես եղած կամ  
 արդէն հոն ծնած ու սնած ըլլալով իրազէկ  
 են այն փոքրու ընտանեկան բնոյթներու և  
 սովորութեանց, արգահատանօք միայն  
 կրնան յիշիլ թէ ընտանեկան շրջանակի մէջ  
 ի՞նչ արժէք ունին արբունքի հասած պա-  
 տանի մը և մանկամարդ օրիորդ մը, որոնք  
 սակայն ապագայ հայր և մայր ըլլալու սահ-  
 մանուած են:

Ասոնք իրենց սեփական կամքը և հա-  
 մոզումը չունին, որչափ որ ալ իրենք զգան  
 թէ՛ նոր ընտանիք մը հիմնելու ժամանակը  
 հասած է իրենց համար, և փոխանակ գիտակ-  
 ցաբար նետուելու այդ անել ճամբուն մէջ,  
 թող կուտան որ ծնողները և ազգական-  
 ները իրենց համար իրարանցումի մէջ գըտ-  
 նուին և տնօրինեն ամեն ինչ, որչափ որ  
 անոնց խելապատակը կը զօրէ՛ իրենց ա-  
 պագային վրայ իշխելու գործին մէջ:

Ու այսպէս դէպքերը իրարու կը յա-  
 ջորդեն: Երիտասարդը անկիւն մը քաշուած  
 ամեն պատրաստականութիւն ցոյց կուտայ  
 հլու և հնազանդ կերպով լսելու այն մահու  
 և կենաց վճիռը, որ իր մեծերուն կողմէ  
 կը տրուի իրեն նկատմամբ. նպաստաւոր թէ  
 աննպաստ:

Ինք լուրջ կերպով չ'մտածեն թէ՛ ապա-  
 գան իրեն համար խոշոր վտանգներ պատ-  
 բաղած է, որուն ուղղակի կերպով ինք

կուրծք պիտի տայ և հետեւաբար իր կամքը  
 մեծ կշիռ ունի այդ ձեռնարկին մէջ:

Այնպէս ալ մանկամարդուհին. ինք  
 իրեն համար առանց կարենալ մտածելու —  
 ինչ որ շատ մեծ աւօր կը համարուի — պիտի  
 սպասէ որ հեռիէն հեռի գինք տեսած ու  
 իրեն գեղոյն ու շնորհացը հաւանած ծնողք  
 մը գայ և իր մայրիկին հաւանութիւնը ուզէ՛  
 երեն անձանօթ, բնաւորութեանցը անտեղ-  
 եակ և երեսը չ'տեսած մէկ երիտասարդին  
 հարմարցնելու համար:

Երկու կողմի ծնողներուն հաւանու-  
 թիւնը բաւական կը համարուի և գերակշիռ  
 է այդ առեւտրական գործողութիւնը իր  
 կատարածին հասցնելու, իսկ ապագայ եր-  
 ջանկութիւնը կամ դժբաղդութիւնը, ասի-  
 կայ բազմի խնդիր է:

Այսպէսով շատ մը նորահաստատ ըն-  
 տանիքներու քայքայումը առաջ եկած է  
 ի վրաս մեր ազգին, որուն բուն պատճառը  
 ազգա ծնողները եղած են:

Միջավայրերու փոփոխութիւնը և պա-  
 հանջներն ալ, մեր այս հնաւանդ եւ ան-  
 ճահ սովորութեանց վերջ մը գնել չեն կա-  
 Րողացած դժբաղդաբար և այսօր տխուր ենք  
 խոստովանելու թէ՛ գաւառական այդ յուսի  
 սովորութիւնները նոյնութեամբ փոխադր-  
 ուած են Եգիպտոսի մեծ ոստանին, Գահի-  
 րէի մէջ ալ. ուր գոնէ միջավայրին ազդե-  
 ցութեան տակ, իրաւացի պիտի ըլլար յու-  
 սալ թէ՛ դէպի լաւ փոփոխութիւն մը  
 կրած կրնայ ըլլալ այս գրութիւնը:

Ճիշդ վերոյիշեալ ձևերուն տակ կատար-  
 ուած նշանախօսութիւն մ'է, որ վերջերս  
 այնչափ խօսակցութեան նիւթ մատակարարեց  
 Գահիրէի հայոց մէկ մեծագոյն մասին և մինչև  
 դատաւորաց խաղաղութիւնը վրդովելու  
 առիթ տուաւ:

Գաւառացի հաճի աղաչի թիփ մը,  
 աղօթքով և պահօք սնած, երկա՛ր տարի-  
 ներ — ըստ իրեն կարծեաց — ազգին օգտակար  
 ծառայութիւններ մատուցած, բանկալի ա-  
 մեն քարեպաշտօրիւններով զարդարուած,  
 օր մը կը դիտէ որ իր զաւակը ա՛լ նշա-  
 նելու և կարգելու տարիքին հասած է:

Երկար փնտռութեանց վերջ, համոզ-  
 ուելով թէ քաղաքիս մէջ սոյոյիս յարմար  
 և իր քարեպաշտիկ զգացմանցը համապա-  
 տասխանող հարմարու մը չպիտի կարենայ  
 գտնել, միտքը կուգայ իր երբեմն ալրած  
 հայրենիքը և կ'որոշէ այն տեղէն ընտրել

իր հարսնացուն, որովհետև անոնք շատ պարկեշտ, շատ համեստ, շատ խաղաղասէր կ'ըլլան և իր տունն ալ դրախտի մը կը վերածուի :

Կը մնայ միջոցը գտնել : Այդ ալ շատ գիւրին և հեշտ է : Կրնայ գրել իր մէկ հին բարեկամին, որը լաւագոյն յատկութիւններով օժտուած հարսնացու մը կ'ընտրէ և կը դրկէ :

Հոս կ'սկսի ամենամեծ սխալ քայլը առնուի :

Երկար բարակ թղթակցութիւններ կը կատարուին և երկուստէք համահաճ, մեր մարդուկին կողմէ կը զրկուի հարսնացուին ճանապարհածախսը և նշանախօսութիւնը հաստատող մատանին. ու աղջիկը 20—25 օրուան հեռուոր տեղէն ճամբու կը դուրսի : Այլ ևս հարկ չ'մնար խօսելու այն դժուարութիւններուն վրայ, որ իր երկրին մէջ ընդունուած սխալ գրութեան արդեւամը կը կրէ մատղաշ աղջիկ մը, իր երկար ճամբորդութեանը մէջ :

Բայց երանի՜ թէ խնդիրը այդ դժուարութիւններուն մէջ սահմանափակուէր :

Մեր քառեկոճ հաճի աղան, երկար տարիներ մէկտեղ պարած դրացիներէն միոյն աղջկանն ալ կը հաւնի ու կ'առաջարկէ որ զայն իր զակին հարսնութեան տրուի : Հոս ալ երկուստէք համաձայնութիւնը կը գոյանայ և նշանախօսութեան պայմանները կը կնքուին :

Կը մնայ ուրեմն ո'ւէ ձեռով մը նախորդ բանակցութիւնները խզել և չեղեալ նկատել, ուրկէ կ'սկսի զրկանքներու և անիրաւութեանց շարքը. բարեկամական յարաբերութեանց կապը կը խզուի, երկու հակաակորդներ զերենք շրջապատողներով իրարու դէմ կը զինուին, և գայթակղութիւնը կը տիրէ ամեն մաքերու մէջ :

Ահաւասիկ համառօտութիւնը այն նշանախօսութեան խնդրոյն, որ վերջերս կը յուզուի և մաքերը զբաղեցնելու առիթ կուտայ : Հաճի աղայական աւանդամուտութեան մը պատճառաւ թէ՛ «հայրը անդ, որդին մեռած է» :

Եթէ ժամանակի և միջավայրի պահանջներուն յարմարիլ չենք գիտեր, գոնէ կըրնայինք օգտուիլ անցելայն մէջ պատահած նմանօրինակ բիւրաւոր անհաճոյ դէպքերէն, որոնցմով շրջապատուած ենք յաճախ և զորս տեսնելով պէտք էր որ մեր սովորութեանց ու բարուց մէջ մտցնէինք բարեշրջում մը, զմեզ դէպ ի լաւը, դէպ ի օգտակարը առաջնորդող :

Դժբաղդութիւն մ'է որ այս շրջահանցութեանէն ալ զրկուած ենք ստէպ և մեր մէջ կը գտնուին դեռ շատ մը արմատացած սովորութիւններ սրբաբարեւու կարօտ վիճակի մէջ, որ ոչ միջավայրը և ոչ ալ սերունդներու հետզհետէ զարգացումը փրկարար ազդեցութիւն մը կը գործեն ատոնց վրայ :

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

ԿԻՊՐՈՍԻ ԿԻՐԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅԻՆ

ՅՈՒՅԱԿ Ա.

Վսեմ. Տիգրան Փաշա Ապրո	975
Մեծ. Տիգրան Սեդրաք Դաւթեան	97 50
" " Առաքել Պէրպէրեան	97 50
" " Նշան Մարմեան	50
" " Յովհաննէս Եաղճեան	50
" " Գրիգոր Գմբեան	50
" " Կիրակոս Զոլաքեան	20

Գումար Դրչ. ողջ 1340 00

Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովոյ

Ատենադպիր, Ատենապետ  
Ա. ՊԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆ Ա. Մ. ՊԵՏՐՊԵՐԵԱՆ  
1 Մարտ 900

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՆԴՐԻԱՅԷՆ

Աղեքսանդրիոյ Սոց. ընկերութեան արտիկի ընտրութիւնը.— Առսմանաւարտի եւ ժող. Դրադարան-Ընկերացարանի միացումը :

Անցեալ կիրակի պատարագէն յետոյ, խումն բազմութիւն մը կը ձիմէր Առաջնորդարանի սրահը, հոն հրաժարած Աղք. ընկերութեան տեղ նոր ընտրութիւններ ընելու համար :

Աղքատներու համար հաւաքող կարգ մը հարուստ և կարեւոր անձնաւորութիւններ տեսնելու չափազանց ուրախացայ և նոյն րոպէին թշուառութեանց ուրուանկաբը, խոցոտուած, վերաւոր որք Հայաստանը ոլորտանալով կը պատկերանար աչքերուս առջև և և սարսափէն փախչող խեղճերու տօյոյն ու դալկահար դէմքերը սկսան գանկս փոթորիկել : Ներսէս ձայն մը ինձ կ'ըսէր, պէտք է աշխատիլ, պէտք է ամեն գոհողութիւն է՛խնայիլ այս խեղճերուն վիճակը բարոքելու համար :

Այդ մտածումներուս մէջ էի երբ սրահին մէջ աղմուկը բարձրացաւ : Հիմա, այդ օրուայ ժողովին իմ վրայ թողած տխուր տպաւորութիւնը պիտի պատմեմ ընթերցողներուս :

Ամեն մարդ իր գրադիրներով, իր ազգականներով, իր ծառաներով հոտ էր : Պոռոցն ու գոչոցը բարձրացած էր և արդէն չեղած կարգապահութիւնը խանգարած էր : Իրար հասկնալ չ'կարո իրար պաշտպանողները բազմաթիւ էին : Բանակորիկ մէջ յաղթուողին ծառան կամ ազգականը իր բարեկամին կամ տիրոջ ըսածը կ'ամբողջացնէր արհեստագործ, խառնափնդոր, կցկուտուր ուսմական անբարեկամի բացատրութեամբ : Եռուկայական ոխեր, անձնական ատելութիւններ սկսած էր սրտերէն դուրս դուրս և այդպէսով աղքատներուն համար հաւաքող կարգիկ հոտ իրենց կիրքերը, իրենց վէճերը յատկ կը տանէին : Կիրքը իր բոլոր սարսափող աշխատակութեամբ զեղում էր զՌմագձութեանց վրայ : Ընկերային մոլեգնտոտ Գոյսձ ուսման իրարու վրայ սրուած էին : Տեսնելու բան էր թէ այդ զեղում կիրքը մարդոց դիմագծութեան վրայ ինչ հրէշային տգեղութիւններ կ'առնէ և ինչպէս մարդիկ իրենց սկզբնական վիճակը կ'զգենուն :

Հրապարակային ժողով մըն էր ասիկա, կարգ մը մարդոց կողմէ դրուած և իրաւունք տրուած էր ամեն մարդու, գալ իր անունը արձանագրել, անգամ ըլլալ և մասնակցիլ անմիջապէս այն օրուայ ընտրութեան գործին : Կար հոտ, եսասէր և կրքոտ խմբակ մը, անգիտակից և միամիտ մաս մը, արուեստաւորներու խումբ մը, որոնք գիտակից իսկ չէին թէ ինչ բանի համար հոն էին հաւաքուած և ազնիւ պարկեշտ մտածումով գոր-

ծել ուղող անաչառու անկողմնակալ խումբ մը, որոնք ի սրտէ կը փափաքէին կանոնաւոր ընտրութեան մը :

Ամբողջ ժամ ու կէս շարունակուեցաւ ատելիաները և յիշոցները : Կարգ մը նոր ինքնակոչներ խեղճ արհեստաւորներու բոլորովը կը ցատկոտէին գրողով՝ որ պողային թէ՛ իրենք ալ կուզէին ձայն ունենալ : Քանի մը հոգի ալ կը դիմեն իմ մէկ բարեկամիս և միամտօրէն կը հարցնեն թէ այս մարդիկը ինչ կոչքն իրենցմէ : Վերջապէս ոչինչ եղբակացութեան յանգելով հրաժարած Աղք. ընկերութեան անդամները ժողովը չեղեալ համարելով մեկնեցան միանգամայն նոր անդամներուն ընտրութեանց իրաւունքին չ'առնակցիլը առարկելով : Իսկ անդին մնաց մաս մըն ալ որ Աղք. ընկերութեան նոր ընտրութեան օրոյումն յամառեցաւ և օրինաւոր համարեց նոր անդամներուն ձայն ունենալը և այսպէսով ապօրինի ընտրութիւն մը կատարեցին կարգ մը համախոհներով :

Բայց չ'ծածկէնք որ շատերը քուէ տալու համար գրուած են եղեր և չ'պիտի ամաւճարնին շարունակեն առջի օրն իսկ : Եստեմն ալ պատահական առաջարկութիւն մը չ'մերժելու համար ընդունած են բան մը վճարել :

Եթէ այս ապօրինի ընտրութիւնը Վսեմ. Պոռոս փաշան ուղէ վաւերացնել — որ հակառակ է Սահմանադրական օրինաց և թէ Աղքատախնամի կազմական կանոնագրի ո'չ մէկ յօդուածը, ո'չ մէկ բարձր կը թոյլատրէ այդ տեսակ վայրկեանական անդամակցողը ձայն ունենալը — այն ատեն կը կարծեմ թէ բաւական մեծ սխալ մը գործուած պիտի ըլլայ :

Նորին վսեմութիւնը իր անձին օրինակովը հաստատած է ուրիշ անգամ թէ՛ ինքը միայն ժողովուրդին կամքով կուզէ ատենապետել : Եստեմն ալ տեսակ ուրիշի մը մասին եղած ապօրինի ընտրութեան մը համար չ'եմ կարծեր որ համակարծիք գտնուելով վաւերացնէ : Միանգամայն ընդհանուր ցատկոտութիւնս կը յարմարեմ ամեն անոնց, որոնք կուսակցական նեղ հաշիւներ մտցնելով աղքատաց գործին մէջ, չեն ուզեր փոքր խանակուած ազատ կարծիքներէն որոշ և ճշմարիտ եզրակացութեան մը հասնիլ :

Կը լսեմ որ հրաժարեալ Աղք. ընկերութիւնը որոշած է իր պաշտօնը շարունակել և ոչ ոքի հաշիւ չ'յանձնել՝ մինչև այն ատեն երբ օրինական ընտրութիւն մը կատարուի ինչո՞ւ, ինչո՞ւ համար այդ ամենը . . . և դեռ ինչևէ երբ պիտի տեսէ . . . Որչա՞ք զղուելի տգեղութիւններ ունինք տակաւին մեր բոլոր գործիքուն մէջ :

Այս առթիւ ուրիշ նորութիւն մըն ալ պատմու : Քանի մը ամսուան գոյութիւն ունեցող Ուսումնասարհը որ հիմնուած էր վնասելու համար — չ'գիտեմ ինչ վայրենի մտածումով — ժող. Գրադարան-Ընկերացարանին վերջերս քանի մը ազնիւ անձերու կողմէ դիմում եղած էր միացնել ու ժողովը և աւելի լաւ տեղ որ վարձել ու ընդարձակել գործը : Միջոց չ'մնաց որ չ'գործածէին խափանելու համար, միասին գործելու այս փորձիկ գործը, ամենուն աչքին ալ զգուշուելու քանի մը անձեր : Այս ամենուն մէջ աչքի կը զարնուի Գ. Ս. ԱՅՂԵՅՆ մէկը, որ բոլոր ջանքով կ'աշխատէր արդիւն ըլլալ և սպարնայիքներ կը դրկէր իրենց ընկերներուն որ եթէ միութեան գործը կատարեն, կենսաբանին վտանգի մէջ է :

Այս եղանակով ալ չեն կրնար աջակցիլ և Լ. Մ. ի տունը ժողով մը կը կազմեն : Հոտ Լ. Մ. բացարձակապէս կը յայտարարէ թէ՛ «Քանի որ մենք, ամբողջ կուսակցութիւնս անպատուութեանք Դիպնակցութեան և անուանուած ենք արատաւորուած կուսակցութիւն և որովհետեւ պոչ հիմնարկութիւնս ալ Դիպնակցական հիմնարկութիւն մըն է, հետեւաբար ոչ միայն պէտք չ'է միանալ այլ և զգուշանալու է Դիպնակցականներուն բարեւ տալէն իսկ » :

Այս խօսքերուս վրայ նոյն րոպէին տեղական մասնաճիւղին երկու կարեւոր անդամները զգուշացնող մասիկ ընկելով հակառակող խմբակին ուրիշ կարգ մը անբարոյական վաթմունքն ալ, կ'որոշեն



# ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Պէտք է գիտնաք թէ ընկերական կամ գաղափարային աշխարհին մէջ մտնելու համար քաջ չեմ, որովհետեւ ինձ պէտք եղածին չափ դպրոց գնացած չեմ. սակայն մեր ժողովրդեան մէջ, երբեմն մարդոց յայտնի կերպով է գործ դրած ենք թիւերը չ'տեսնելու չափ ալ կոյր չեմ:

Անցեալ գիշեր պատահաբար երեկոյթի մը մէջ Ձեզի հանդիպեցայ ուր ձեզ հետ եղողներու եւ Ձեր մէջ տեղի ունեցած խօսակցութեան ժամանակ, Գահիրէի Որբերու ընկերութեան արդի վիճակին ու ապագայի երաշխաւորութեանը վրայ տեսութիւններ կ'ընէիք:

Որովհետեւ ես ալ այդ ընկերութիւններէն միոյն անդամակցողներէն էի, Ձեր խօսածները զիս աւելի հետաքրքրեցին. ըստ որում մեծ եղաւ իմ զարմանքը երբ Ձեր մասին ունեցած անաչառ համարման հակառակը ցոյց տուիք. ըսելով թէ այդ ընկերութեանց այն ինչին մէջ կուզակցածներ կան եւ այլն:

(Ձեր նիւթէն իսկ շեղելով Վասպուրականի կողմը Ազգային նոր ոգեւորութեանը ազնուաբար աշխատողները Ձեզի կ'ընեն անպատուաբար բառով մկրտեցիք):

Այդ պահուն անմիջական մտածում այն եղաւ որ, խելացի եւ անաչառ անձ մը՝ դատի մը մասին վճիռ արձակելէ յառաջ կէտ առ կէտ հետեւելով նոյն դատին մանրամասնութեան, իւր համոզումը այն ատեն երեւան պիտի բերեր հաւաքումներու մէջ, երբ որոշ կերպով մերկանային յոնցաւորները իրենց դիմակներէն:

Այս առթիւ քչ մի ներում է' թող լատերէս գատ, իմ կողմանէ պարտք կը համարիմ ըսել Ձեզ հետեւեալները.

Նախ որ, ուսուցանելէ յառաջ ուսանիք, երկրորդ, ուրիշին հաճոյ երեւալու համար ճշմարտութիւնը չ'աղարտէք:

Երրորդ, առանց լսելու վճիռ չ'տաք:

Վերջին, չըսէ՛ք, բայց երբ ըսէք, ուղիղը ըսկաւ ջանաք:

ԱՐՏԱՇԷՍ Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

## ՆՈՐԱՀԱՍՏԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ

ՄԻԱՌՈՅԻ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԸՆՏԻՐ ՄԻՎԱՐԹՆԵՐՈՒ ՄԵՍԻԱՆԱԿ ՆԵՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՏՈՒԹԻՒՆ

## ՏՈՒՏԵԱՆ ԱՍԷԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ,

Պատիւ ունին ծանուցանել թէ իրենց Պապէլ-Հատիտի նորահաստատ գործարանին մէջ աշխատութիւններն սկսած են եւ կը պատրաստուին ընտիր ծխախոտ եւ սիկարէթներ:

Տիրար Կ. Տուտեան, նախկին գլխաւոր պատրաստիչ (հարմանճի) Մաթոսեան ընկերութեան տան, այս անգամ իւր պաշտօնը թողած եւ իր անձնական հաշւոյն մեզի հետ ընկերացած ըլլալով, իւր մասնապիտուկեան եւ երկարամեայ փորձառութեան շնորհիւ, մեծ խնամքով պիտի պատրաստէ ծխախոտներ թէ՛ ձեռքով եւ թէ՛ մեքենաներու միջոցաւ կարուած:

Վաճառման կեդրոնաօեղի

ԵՍԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴՐԱՆ ԴԻՄԱՑ ԱՍԷԱՆ-ԷԼ-ԽԱՏՐԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

1-1

## ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 1 ԱՊՐԻԼ 1900

912	465	6722	2800	538	6536
2595	4070	6403	636	3129	1980
8574	8542	1635	7314	519	4980
2669	2242	3103	6077	1863	623
	2322	876	939		

# Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՊՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունին ծանուցանել թէ՛ երկար տարիներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քանակութեամբ ապաւրանք տուած է եւ յետ այսու մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գնորդ պիտի վաճառէ:

Իրեն դիմող գնորդները կատարելապէս գոհացնելու եւ մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջը տեղի ունեցած դժգոհութիւնները բաձաւուր համար մեծ հոգածութիւն պիտի ունենայ եւ անոնք որ Ա. Գլխարի տոմսերը ունին իրենց քով, մինչեւ վերջին Գլխար լիւրերովը հանդերձ իրենց պիտի զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն պիտի ծախուին նաեւ ի Մուսքի, Տիրար Գ. Պալլըզճեանի խանութն:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գիները:

Համապուրկ 7 Գլխա. իւրաքանչիւրը 13 1)25ն. — ամբողջ 94 1)2 :

Պրոնսվիկ 6 Գլխա. իւրաքանչիւրը 16 զրուշէն. — ամբողջ 96:

Հունգարական 6 Գլխա. իւրաքանչիւրը 17 զրուշէն. — ամբողջ 102:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլխար թիւերը արդէն հասած են եւ հրատարակ ելած:

2-8

## ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչեւ ցարդ սովորութիւնն չէ եղած կամ քիչ պատահած է, որ հայ թերթերու վարչութիւններն մասած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստէպ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ գտնել անկարելի կըլլայ:

Մենք՝ «Արշալոյս»-ի հրատարակման առաջին օրէն մեր սպասումին քանակը ի նկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաճաքածոյի համար աւելի սպազրել տուած եւ առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս»-ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան դիմել թերթիս ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Հաթակազմին համար 10 ֆրանքի գումար մը զրկելով մնալ:

Գարձեալ արտասահմանի ո՛ր եւ է թերթի բաժանորդ գրուել փափաքողներէն անոնք որ զիւրութիւնը չունին անոնց խմբագրութեանց հետ յարաբերութեան մտնելու, կրնան մեզի դիմել:

## ՏՕՐԹՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Ասամբլայոյ

Ապիսն Շարք Գուպի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղւաններ:

Կը դազրեցնէ վայրկենապէս ազգայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղեցիկը:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղւաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

# ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՒ

## ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ

Օուօզի Պաֆ վանաւառան մօտերը, Կամե-էլ-Պեմաթի հիւս զիմացը

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ եւ անխաղախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական եւ յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաթներ կայն:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին: 44-50

## ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տաներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արեւստին ամեն ճիւղերը լաւ ճշկած եւ փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապաիւլլահ եղբայր տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էգպէիյի Շարիա Գամիէլ Օթիէլ ՇէֆէրՏՍՄԻ ճիշդ գիւմաց թիւ 3 արարթմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրսը կ'ուսնան ի հարկին:

Ակրանսիսըման բնական մեծութեամբ:

Գնահանադիրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միներաքիւր:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ, կււն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր բուռ, օքսիթրուման կււն:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս գոհ պիտի մնաք:

ԳԻՐԲ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ չըջակայից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասական, Կրթական, Գիտական, Գրական, Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիրար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան հայոց ի Գահիրէ: